Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1246-23.01.2026-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 12.1-ին կետից հետո լրացնել նոր 12.2-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«12.2) անկախ կյանքի կենտրոն՝ անկախ կազմակերպաիրավական տեսակից եւ ֆինանսավորման աղբյուրից անկախ կյանքի ապահովմանն ուղղված ծառայություններ մատուցող, որը բավարարում է սույն օրենքի 21-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված իրավական ակտով սահմանված պահանջները.».

2) 17-րդ եւ 18-րդ կետերում «կողմից» բառից հետո լրացնել «կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով եւ լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Եթե փոխհատուցման գումարը տրվում է օրենքով չարգելված այլ աղբյուրներով, ապա սույն կետում նշված պայմանագիրը կնքվում է եռակողմ՝ ներառելով նաեւ ֆինանսական փոխհատուցում տրամադրող կազմակերպություններին.»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 4-րդ կետից հանել «եւ այդ նպատակով անկախ կյանքի կենտրոնների ստեղծմանը» բառերը.

2) 3.1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3.1. Անկախ կյանքի կենտրոնի գործունեության կարգը եւ պայմանները հաստատում է լիազոր մարմինը:».

3) 3.2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 4-րդ մասը «հասարակական կազմակերպություններին» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ պետական կառավարման համակարգի մարմիններին» բառերը:

Հոդված 4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: